

	<p>խմբակային սարքավորումները գեներատորային ազդանշանման կառուցվածքները, հաղորդման և ընդունման տրակտերը, կանալի մնացորդային մարումը,</p> <ul style="list-style-type: none"> վնասվածքները և մակարդակների անհամապատասխանությունը սահմանված նորմերին հայտնաբերված են, հնարավոր անսարքությունները վերացված են
<p>Խնդիրների բնագավառ 4</p>	<p>Բացահայտել վնասվածքները սնուցման սարքավորումներում, դրանց ծնող պատճառները</p>
<p>Աշխատանքային գործընթացը</p> <p>Կատարման չափանիշներ</p>	<p>Էլեկտրակապի և լարային հաղորդումների գծային կառույցներ էլեկտրամոնտաժողը ստուգում է սնող սարքավորումների սրահի վիճակը, ակումուլյատորային մարտկոցների լուծույթի խտության և լարումների համապատասխանությունը սահմանված նորմերին, գեներատորային և ուղղիչ սարքերի վիճակը, նրանց աշխատունակությունը, հայտնաբերում վնասվածքները և դրանք ծնող պատճառները:</p> <ul style="list-style-type: none"> ակումուլյատորային մարտկոցների լարումները և լուծույթների խտությունները ստուգված են, սնուցող կառուցվածքներում վնասվածքները և դրանք ծնող պատճառները հայտնաբերված են, ակումուլյատորային մարտկոցներում համապատասխան լարման նորմաների շեղման դեպքում մարտկոցների լիցքավորումը կատարված է, լուծույթի խտությունը և լարումները ստուգված են:
<p>Խնդիրների բնագավառ 5</p>	<p>Կատարել ստուգումներ և չափումներ կապի գծերում</p>
<p>Աշխատանքային գործընթացը</p> <p>Կատարման չափանիշներ</p>	<p>Էլեկտրակապի և լարային հաղորդումների գծային կառույցներ էլեկտրամոնտաժողը ստուգում է գյուղական, քաղաքային և միջքաղաքային կապի կաբելային գծերը, հայտնաբերում պարամետրերի շեղումը սահմանված նորմաներից, վնասվածքները և դրանք ծնող պատճառները և համապատասխան միջոցներ է ձեռնարկում դրանք վերացնելու համար:</p> <ul style="list-style-type: none"> կապի կաբելային գծերում պարամետրերի շեղումը սահմանված նորմաներից հայտնաբերված է, վնասվածքները և դրանք ծնող պատճառները բացահայտված են, վնասվածքները վերացված են, համակարգի անխափան աշխատանքը ապահովված է:
<p>Խնդիրների բնագավառ 6</p>	<p>Ապահովել ախտորոշումն ու թետավորումը կապի կառուցվածքներում և համակարգերում:</p>
<p>Աշխատանքային գործընթացը</p> <p>Կատարման չափանիշներ</p>	<p>Էլեկտրակապի և լարային հաղորդումների գծային կառույցներ էլեկտրամոնտաժողը ստուգում է համապատասխան չափիչ սարքերը գծերի և կանալների պարամետրերի չափման համար, կատարում է վնասված գծերի և կապուղիների ստուգումներն ու չափումները, հայտնաբերում վնասվածքները, դրանց վերացման համար ձեռնարկում միջոցառումներ:</p> <ul style="list-style-type: none"> չափիչ սարքերը ամբողջական են և գտնվում են սարքին վիճակում, վնասված գծերի և կապուղիների ստուգումներն ու չափումները կատարված են, համակարգերի հաղորդման ընդունման տրակտում առանձին կառուցվածքներում սիմետրիկ կաբելների պարամետրերի

	<p>չափումները իրականացված են վնասվածքների վերացումից հետո,</p> <ul style="list-style-type: none"> • վնասվածքները վերացված են, • սարքերը անխափան շահագործվում են:
Խնդիրների բնագավառ 7	Ապահովել սարքավորումների տեխնիկական շահագործումը և սպասարկումը
Աշխատանքային գործընթացը	<p>Էլեկտրակապի և լարային հաղորդումների գծային կառույցներ էլեկտրամոնտաժողը կատարում է սարքավորումների և գծային կառուցվածքների տեխնիկական շահագործումը և սպասարկումը, տեխնիկական հրահանգման համաձայն կատարում է կանխարգելիչ աշխատանքներ, ստուգումներ, հայտնաբերում անսարքությունները, վերացնում դրանք ծնող պատճառները:</p> <ul style="list-style-type: none"> ▪ սարքավորումների տեխնիկական շահագործումը և սպասարկումը կատարված է, ▪ տեխնիկական հրահանգման համաձայն կանխարգելիչ աշխատանքները կատարված են, ▪ անսարքությունները հայտնաբերված են ▪ անսարքության պատճառները վերացված են, ▪ սարքերը անխափան շահագործվում են:
Խնդիրների բնագավառ 8	Կատարել ցանցերի և սարքավորումների մոնտաժում և ապամոնտաժում
Աշխատանքային գործընթացը	<p>Էլեկտրակապի և լարային հաղորդումների գծային կառույցներ էլեկտրամոնտաժողը ըստ հանձնարարականի կատարում է կապի գծերի մոնտաժում կիրառելով մոնտաժման եղանակները, կատարում է հին սարքավորումների ապամոնտաժում, նոր սարքավորումների տեղադրում և մոնտաժում, կատարում համալրման աշխատանքները, ստուգում աշխատանքային ռեժիմները, փոխգործողությունները համանման սարքավորումների հետ:</p> <ul style="list-style-type: none"> • կապի գծերի, սարքավորումների մոնտաժումը և ապամոնտաժումը կատարված է, • համալրման աշխատանքները կատարված են, • աշխատանքային ռեժիմները ստուգված են, • կապի համակարգի անխափան աշխատանքը ապահովված է:
Պատասխատվությունը	<p>Էլեկտրակապի և լարային հաղորդումների գծային կառույցներ էլեկտրամոնտաժողը պատասխանատու է.</p> <ul style="list-style-type: none"> • սարքավորումների, գծային կառուցվածքների և հաղորդման համակարգերի մոնտաժման, տեխնիկական շահագործման և սպասարկման համար:
Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և վերաբերմունք	
Լեզուներ	հայերեն - գերազանց մեկ օտար լեզու - բավարար
Համակարգիչ	MS Word - բավարար Internet Explorer՝ բավարար
Գիտելիքները	<p>Էլեկտրակապի և լարային հաղորդումների գծային կառույցներ էլեկտրամոնտաժողը պետք է իմանա՝</p> <ul style="list-style-type: none"> ▪ գծագրերի և սխեմաների կառուցման հիմնական կանոնները, ▪ հաղորդակցման և կոմուտացիոն համակարգերի շահագործման և տեխնիկական սպասարկման կանոնները, ▪ էլեկտրանյութագիտության հիմնական դրույթները, ▪ ընդհանուր էլեկտրատեխնիկա, ▪ թվային և անալոգային հաղորդակցման համակարգերի կառուցվածքը, ▪ կոաքսիալ, սիմետրիկ, օպտամանրաթելային մալուխների կառուցվածքները և նրանց հիմնական պարամետրերը,

	<ul style="list-style-type: none"> անվտանգության հիմնական կանոններն ու նորմերը:
Կարողությունները և հմտություններ	<p>Էլեկտրակապի և լարային հաղորդումների գծային կառույցներ էլեկտրամոնտաժողը պետք է կարողանա՝</p> <ul style="list-style-type: none"> օգտվել կառուցվածքային սխեմաներից, գրաֆիկներից, գծագրերից, օգտվել տեխնիկական և տեղեկատու գրականությունից, հասկանալ տարբեր տեսակի ցանցերի կառուցվածքը և նրանց տոպոլոգիան , կատարել կապի գծերի և սարքավորումների մոնտաժում, հայտնաբերել անսարքությունները, համապատասխան մշտներ ձեռք առնել անսարքությունները վերացնելու համար, կատարել համապատասխան չափումներ կապի համակարգերում և կառուցվածքներում, օգտվել ախտորոշիչ և թեստավորող սարքերից, կատարել առանձին հանգույցների սխեմաների կազմում:
Վերաբերմունքը	<p>Պարտաճանաչ, կարգապահ, հաղորդակցվող, խնայող, ճշտապահ, մաքրասեր, նորը ընկալող</p>

ՄԱՍՆԱԳԵՏԻ 2009 «ԿԱՊԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄՈՆՏԱԺՈՒՄ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԷԼԵԿՏՐԱԿԱՊԻ ԵՎ ԼԱՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԳԾԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ ԷԼԵԿՏՐԱՄՈՆՏԱԺՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Մասնագետի «Կապի սարքավորումների մոնտաժում և շահագործում» մասնագիտության «Էլեկտրակապի և լարային հաղորդումների գծային կառույցներ էլեկտրամոնտաժող» որակավորման շնորհման՝ մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման չափանիշներն են՝

1. համապատասխան պետական կրթական (որակավորման) չափորոշիչի բոլոր մոդուլների ուսումնառության արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքները, որոնց ստուգումն իրականացվում է հարց ու պատասխանի կամ համալիր թեստային հարցման միջոցով:
2. մասնագիտական կարողությունները, որոնց ստուգման համար պահանջվում է կատարել նշված գործողությունները՝
 - Բացահայտել հեռախոսային ցանցում անսարքությունները և դրանք ծնող պատճառները:

- սարքավորման տիպին և տեսակին համապատասխան առանձնացնել թերություններն ու վնասվածքները,
- ուրվագծել սարքավորման տվյալ անսարքության հնարավոր պատճառների շրջանակը,
- ընտրել անսարքության վերացման ուղիները,
- սահմանված նորմերին համապատասխան կատարել ստուգումներ կոմուտացիոն համակարգերում և կառուցվածքներում,
- ստուգել ազդանշանման սարքավորումները,
- հայտնաբերել վնասվածքները հանգույցներում, նրանց ծնող պատճառները,
- վերացնել վնասվածքները փոխարինող տիպային էլեմենտի միջոցով,
- անսարքությունները վերացնելուց հետո սարքավորումները բերել համապատասխան տեխնիկական նորմաների,
 - ստուգել հաղորդման համակարգերի անհատական և խմբակային սարքավորումները գնեթատորային ազդանշանման կառուցվածքները, հաղորդման և ընդունման տրակտերը, կանալի մնացորդային մարումը,
 - հայտնաբերել վնասվածքները և մակարդակների անհամապատասխանությունը սահմանված նորմերին,
 - վերացնել հնարավոր անսարքությունները,
- ստուգել ակումուլյատորային մարտկոցների լարումները և լուծույթների խտությունները,
- հայտնաբերել սնուցող կառուցվածքներում վնասվածքները և դրանք ծնող պատճառները,
- կատարել ակումուլյատորային մարտկոցներում համապատասխան լարման նորմաների շեղման դեպքում մարտկոցների լիցքավորում,
 - ստուգել լուծույթի խտությունը և լարումները,
- հայտնաբերել կապի կաբելային գծերում պարամետրերի շեղումը սահմանված նորմաներից,
- բացահայտել վնասվածքները և դրանք ծնող պատճառները,
- վերացնել վնասվածքները,
- ապահովել համակարգի անխափան աշխատանքը,
- ստուգել վնասված գծերը և կապուղիները և կատարել չափումներ,

- վնասվածքների վերացումից հետո կատարել համակարգերի հաղորդման ընդունման տրակտում առանձին կառուցվածքներում սիմետրիկ կաբելների պարամետրերի չափումներ,
- անխափան շահագործել սարքերը,
 - կատարել սարքավորումների տեխնիկական շահագործում և սպասարկում,
 - տեխնիկական հրահանգման համաձայն կատարել կանխարգելիչ աշխատանքներ,
 - հայտնաբերել անսարքությունները,
 - վերացնել անսարքության պատճառները,
- անխափան շահագործել սարքերը,
- կատարել կապի գծերի, սարքավորումների մոնտաժում և ապամոնտաժում,
- կատարել համալարման աշխատանքներ,
- ստուգել աշխատանքային ռեժիմները,
- ապահովել կապի համակարգի անխափան աշխատանքը, սարքերը անխափան շահագործել,
- կատարել հաղորդման համակարգերի ուղիների հիմնական պարամետրերի չափումները,
- հաշվարկել տիպային էլեկտրական սխեմաների և էլեկտրոնային կառուցվածքների պարամետրերը օգտագործելով հաշվողական տեխնիկայի միջոցները,
- կատարել հաղորդման համակարգերի ուղիների հիմնական պարամետրերի չափումներ
- հաշվարկել տիպային էլեկտրական սխեմաների և էլեկտրոնային կառուցվածքների պարամետրերը
- կապի և կոմուտացիայի սարքավորումների շահագործողներին տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն տարբեր սարքերի և հանգույցների պահպանման, շահագործման, սպասարկման հարցերի վերաբերյալ

Արդյունքը համարվում է բավարար, եթե վերոնշյալ գործողությունները կատարվել են չափորոշիչներով նախատեսված չափանիշների համաձայն՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոններն ու հիգիենայի պահանջները: